ՎԱՒԵՐԱԳՐԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՒ ԿՈՒԼՏՈՒՐ-ՊԱՏՄԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարիւրամեակների ընթացքում հայ եւ օտարազգի աշխարհիկ առաջնորդներից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ստացել էր շարժական եւ անշարժ գոյք, ձեռք բերել բազում կալուածքներ: Ստացուած եկամուտները եկեղեցին օգտագործում էր ինչպէս սեփական պէտքերի, կարիքների, այնպէս էլ կրթամշակութային նպատակներով: Ցայտնի իրողութիւն է, որ օտար տիրապետութեան պայմաններում մեծ մասամբ հայկական եկեղեցիներին կից գործող ծիսական դպրոցներում էին գրագիտութիւն ստանում հայ մանուկները: Այս տեսակէտից օրինաչափ է, որ հայ հասարակայնութիւնը բուռն հակազդեցութիւն հանդէս բերեց 1903 թ. յունիսի 12-ին ռուսական կայսր Նիկոլայ II-ի ստորագրած օրէնքի առթիւ, որով նախատեսում էր պետականացնել Հայ Եկեղեցուն պատկանող կալուածքներն ու գոյքը: Քաջ գիտակցում էր, որ այս քայլով առաջին հերթին հարուած էր հասցուում հայկական դպրոցին, քանի որ փակման վտանգի տակ էին յայտնուելու եկեղեցու եկամուտների հաշուին պահուող ծիսական եւ թեմական դպրոցները: Ռուսական առաջին բուրժուադեմոկրատական յեղափոխութեան պայմաններում հայութեան չդադարող դժգոհութիւնները Նիկոլոյ II-ին ստիպեցին 1905 թ. օգոստոսի 1-ին հրամանագիր հրապարակել՝ բռնագրաւուած գոյքը Հայ Եկեղեցուն վերադարձնելու մասին:

Հայաստանի առաջին Հանրապետութեան կարճատեւ գոյութեան շրջանում (1918-1920 թթ.), անկախ պետականութեան պայմաններում, տեղի ունեցաւ Հայոց պետութիւն - Հայոց Եկեղեցի մերձեցում: Այս տեսակէտից բնորոշ է, որ ՀՀ ղեկավար գործիչների մէջ զգալի թիւ էին կազմում Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանի նախկին սաներն ու ուսուցիչները:

1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնացումից յետոյ միանգամայն այլ իրավիճակ ստեղծուեց պետութիւն-եկեղեցի յարաբերութիւններում: Բոլշեւիկների հակակրօնական գաղափարախօսութիւնը որեւէ դեր, գործառոյթ չէր նախատեսում եկեղեցու համար: Այն ընկալում էր միմիայն իբրեւ «հին կարգերի մնացուկ» եւ խոչընդոտ բնակչութեան շրջանում կոմունիստական գաղափարների արմատաւորման համար: Այս պայմաններում աւելորդ է խօսել մատաղ սերնդի դաստիարակութեան գործում եկեղեցու ունենալիք դերի մասին: 1917 թ. հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ Խորհրդային Ռուսաստանում բռնագրաւուեցին Ռուս Ուղղափառ Եկեղեցուն պատկանող հարստութիւնները: Խորհրդային Ռուսաստանի օրինակով՝ Հայաստանի նորաստեղծ խորհրդային կառավարութիւնը եւս նպատակային քայլեր ձեռնարկեց Հայ Առաքելական Եկեղեցուն պատկանող ունեցուածքը բռնագրաւելու ուղղութեամբ:

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան (ՀՍԽՀ) պետա-

կան իշխանութեան եւ կառավարման բարձրագոյն մարմինը համարուող Հայաստանի յեղափոխական կոմիտէն 1920 թ. դեկտեմբերի 17-ին դեկրետ հրապարակեց Հանրապետութեան տարածքում գործող բոլոր ազգութիւնների հոգեւոր հիմնարկութիւնների մշակութային եւ կրթական հաստատութիւնները պետականացնելու եւ լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատին յանձնելու մասին: ՀՍԽՀ լուսժողկոմ Աշոտ Յովհաննիսեանի նոյն դեկտեմբերի 17-ի հրամանի համաձայն՝ այդ հաստատութիւնները յանձնուեցին տեղական յեղկոմների լուսաւորութեան բաժիններին: Որպէս բացառութիւն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճեմարանը, հնագիտական եւ ազգագրական թանգարանները, մատենադարանը, տպարանը անմիջապէս ենթարկուելու էին լուսժողկոմատին՝ վերակազմուելով ժողկոմատի կողմից նշանակուող կոմիսարի ղեկավարութեամբ: Լուսժողկոմի դեկտեմբերի 20-ի հրամանով Էջմիածնի նախկին վանական բոլոր կրթամշակութային հաստատութիւնների կոմիսար նշանակուեց խոստումնալի երիտասարդ մտաւորական գործիչ, պատմաբան, լեզուաբան, արուեստագէտ, կուսակցական պատկանելութեամբ սոցիալիստ-յեղափոխական (էսէռ) Լեւոն Լիսիցեանը (1892-1921 թթ. [1]): Վերջինս նշանաւոր ազգագրագէտ Ստեփան Լիսիցեանի որդին էր: Կոմիսարին իրաւունք էր վերապահւում բռնագրաւել համապետական նշանակութիւն ունեցող «բոլոր հնութիւններն ու գեղարուեստական գործերը»:

Լեւոն Լիսիցեանն անմիջապէս ժամանեց Էջմիածին եւ դեկտեմբերի 21-ից անցաւ իր պարտականութիւնների կատարմանը՝ բռնագրաւելով Մայր Աթոռին պատկանող կրթամշակութային հաստատութիւններն ու շինութիւնները (ճեմարանը՝ յարակից շէնքերով, տպարանը, մատենադարանը, թանգարանը, նոր վեհարանի շէնքը, էլեկտրակայանը, Հռիփսիմէի վանքը, Զուարթնոցը եւ այլն): Այս հաստատութիւններն ու շինութիւնները նախատեսւում էր օգտագործել միմիայն կրթամշակութային նպատակներով:

Մայր Աթոռին պատկանող կրթամշակութային հաստատութիւնները պետականացնելը Հայաստանի խորհրդային ղեկավարութեան հակակրօնական եւ հակաեկեղեցական գործունէութեան միայն առաջին քայլն էր: Լուսժողկոմի 1920թ. դեկտեմբերի 31-ի երկու հրամաններով պետական, հասարակական եւ մասնաւոր դպրոցներում արգելուեց կրօնական առարկաների դասաւանդումը, հոգեւորականներին արգելուեց պաշտօնավարել դպրոցներում եւ այլ կրթամշակութային հաստատութիւններում: Միայն կարգաթող լինելու դէպքում նախկին հոգեւորականները կարող էին ստանձնել տուեալ պաշտօնները (այն էլ լուսժողկոմատի յատուկ թոյլտուութեան պարագայում): Արգելքը խախտողներին սպառնում էր «յեղափոխական տրիբունալի» դատը[2]: Իսկ 1921 թ. յունուարի 26-ին Հա-

1 Լ. Լիսիցեանի կենսագրութեան եւ գործունէութեան մասին տե՛ս **Ս. Տէր-Յակոբեան**, Լեւոն Լիսիցեան. «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա. եւ Բ., 1921-1922, Էջմիածին, 1922, էջ 317-319, **Մ. Յակոբեան**, Հայ մտաւորականի ուղին - «Լենինեան ուղիով», 1964, N 1, էջ 96-101, **Վ. Էլոյեան**, Փաստաթղթեր Լեւոն Լիսիցեանի մասին. «Բանբեր Հայաստանի արխիւների», 1973, N 1, էջ 183-196, **Գ. Բ. Ղարիբջանեան, Վարդանեան Լ. Մ.**, Լեւոն Լիսիցեան (1892-1921). «Լրաբեր հասարակական գիտութիւնների», 1993, թ. 1, էջ 53-58:

2 «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1 (1920թ. նոյեմբերի 29 - 1921թ. փետրուարի 18), Էջմիածին, 1921, էջ 43-44:

յաստանի յեղկոմի նախագահ Սարգիս Կասեանը լուսժողկոմ Աշոտ Յովհաննիսեանին լիազօրեց բռնագրաւել, հաշվառել եւ Էջմիածնի պետական թանգարան տեղափոխել ծիսական նպատակներով չօգտագործուող Մայր Աթոռին պատկանող թանկարժէք իրերը (ոսկի, արծաթ, թանկարժէք քարեր, գեղարուեստական, տնայնագործական իրեր եւ այլն), ինչը եւ կատարուեց:

Հայյեղկոմի 1921 թ. փետրուարի 5-ի դեկրետով մատենադարանի, թանգարանի, տպարանի եւ Մայր Աթոռից բռնագրաւուած այլ հաստատութիւնների հիմքի վրայ ստեղծուեց Հայաստանի առաջին գիտական հիմնարկութիւնը՝ Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը: Վերջինի կոմիսար եւ ժամանակաւոր վարիչ նշանակուեց յայտնի հասարակական գործիչ ու մտաւորական Լեւոն Սարգսեանը: Ինստիտուտի գիտական կոլեգիայի նախագահ նշանակուեց Լեւոն Սարգսեանը, գիտական քարտուղար՝ Երուանդ Տէր-Մինասեանը, անդամներ՝ մատենադարանի վարիչ Սեւերերիմ Տէր-Յակոբեանը եւ թանգարանի վարիչ Լեւոն Լիսիցեանը[3]: Նորաստեղծ ինստիտուտի աշխատանքներն ընդհատուեցին 1921 թ. փետրուարեան հակահեղափոխական ապստամբութեան պատճառով. փետրուարի 17-ին դաշնակցական ջոկատները գրաւեցին Էջմիածինը: Մի շարք ղեկավար կոմունիստ գործիչների թում ձերբակալուեց, բանտարկուեց, իսկ փետրուարի 18-ի լոյս 19-ի գիշերը գնդակահարուեց Լեւոն Լիսիցեանը:

Չնայեած Մայր Աթոռի դիմումներին՝ Հայրենիքի փրկութեան կոմիտէն խուսափեց բոլշեւիկեան վարչակարգի կողմից բռնագրաւուած եկեղեցական հաստատութիւնները վերադարձնելուց: Ապստամբութեան պարտութիւնից յետոյ Խորհրդային Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը 1921 թ. սեպտեմբերի 20-ին որոշեց եկեղեցուն վերադարձնել թանգարանը, Հռիփսիմէի, Գայանէի վանքերը եւ վանքապատկան այգիների մի մասը: Միայն դասնամեակներ անց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հետ ստացաւ խորհրդային վարչակարգի կողմից բռնագրաւուած շինութիւնները:

Ստորեւ հրապարակուող փաստաթղթերը վերաբերում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին պատկանող գոյքերի, հարստութիւնների պետականացման եւ եկեղեցապատկան հաստատութիւնների հիմքի վրայ էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի հիմնադրման պատմութեանը: Ժամանակագրական տեսակէտից վաւերագրերն ընդգրկում են 1920թ. դեկտեմբերից մինչեւ 1921թ. փետրուարը:

Փաստաթղթերը հրապարակում են բնագրային տեսքով՝ ուղղագրական եւ կէտադրական անհրաժեշտ շտկումներով: Մեր կողմից կատարուած հաւելումները բերուած են ուղղանկիւն փակագծերում ([]):

ՀԱՄՕ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ
պատմական գիտութիւնների թեկնածու,

3 Տես «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա. եւ Բ., 1921-1922, Էջմիածին, 1922, էջ 321:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

N 1
ԴԵԿՐԵՏ
Հոգեւոր հաստատութիւններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկութիւնների պետականացման մասին[4]

17 դեկտեմբերի 1920թ.
Երեւան

Հ. Ս. Խ. Հ. գտնւած բոլոր ազգութեանց հոգեւոր հաստատութիւններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկութիւնները (դպրոցները, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարաններն ու տպարանները) իրենց ամբողջ շարժական և անշարժ գոյքով համարւում են պետական սեփականութիւն և փոխանցւում են Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատի տնօրինութեան:

Հ. Ս. Խ. Հ. Յեղկոմի նախագահ՝ Ս. Կասեան
Լուսժողկոմ՝ Ա. Յովհաննիսեան

«Կոմունիստ» (Երեւան), 18 դեկտեմբերի 1920թ., N 11: «ՀՍԽՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու», պրակ 1 (1920թ. նոյեմբերի 29 – 1921թ. փետրւարի 18), Էջմիածին, 1921, էջ 16:

N 2
ՀՍԽՀ լուսժողկոմատի հրամանը կուլտուր-կրթական գործերի վերակազմութեան մասին

17 դեկտեմբերի 1920թ.
N 1
Երեւան

1. Առաջարկում եմ սոյն հրամանը հրատարակւելուց մի շաբաթւայ ընթացքում հանրապետութեան մէջ գտնւած բոլոր զեմստւային եւ քաղաքային կրթական բաժիններին անմիջապէս լիկւիդացիայի ենթարկել իրենց գործունէութիւնը եւ յանձնել իրենց բոլոր գոյքը ու գործերը տեղական Յեղկոմների համապատասխան բաժանմունքներին:

4 Նախկին հրատարակութեան վերնագիրն է:

2. Կուլտուր-կրթական բոլոր մասնաւոր հաստատութիւններին (դպրոցներին, մանկապարտեզներին, թանգարաններին, գրադարան-ընթերցարաններին, թատրոններին, կինեմատոգրաֆներին, ակումբներին և այլն), միութիւններին (դպրոցական, գրական-գիտական, հրատարակչական, թատրոնական, երաժշտական եւ այլն) ու ձեռնարկութիւններին (տպարաններին, գրախանութներին, կեոսքներին) առաջարկում եմ ռեգիստրացիայի ենթարկւել սոյն հրամանը հրատարակւելուց երեք օրւայ ընթացքում տեղական Յեղկոմների լուսաւորութեան բաժանմունքներում:

3. Տեղական Յեղկոմների վրայ պարտականութիւն է դրւում անյապաղ լիկւիդացիայի ենթարկել բոլոր այն մասնաւոր կուլտուր-կրթական հաստատութիւնները, միութիւններն ու ձեռնարկութիւնները, որ հետապնդում են ազգայնական, կղերական եւ առհասարակ հակայեղափոխական նպատակներ:

Ծանօթութիւն 1. Հոգեւոր հաստատութիւններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկութիւնները պետականացւում են համաձայն Հ. Ս. Խ. Հ. Յեղկոմի 17-ին դեկտ[եմբերի] հրատարակած դեկրետի եւ Լուսժողկոմի յատուկ հրամանի:

2. Մերձաւոր Արեւելքի օգնութեան կոմիտէին ենթակայ բոլոր կուլտուր-կրթական հաստատութիւնները չեն ենթարկւում սոյն հրամանին Հ. Ս. Խ. Հ. Յեղկոմի 14 դեկտ[եմբերի] որոշման համաձայն:

4. Լիկւիդացիայի ենթարկւած հաստատութիւնների, միութիւնների ու ձեռնարկութիւնների գոյքը գրաււում է եւ փոխանցւում տեղական Յեղկոմների լուսաւորութեան բաժանմունքների տնօրինութեան:

Լուսաւորութեան ժողովրդական կոմիսար՝ [Ա.] Յովհաննիսեան

ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 137, թ. 2 և շրջ.: Վաւերացուած պատճէն: Մեքենագիր:

Հրապարակուած է՝ «Կոմունիստ» (Երեւան), 19 դեկտեմբերի 1920թ., N 12: «ՀՍԽՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու», պրակ 1 (1920թ. նոյեմբերի 29 – 1921թ. փետրւարի 18), Էջմիածին, 1921, էջ 17:

N 3

ՀՍԽՀ լուսժողկոմատի հրամանը հոգեւոր հաստատութիւններին պատկանող

կուլտուր-կրթական հիմնարկութիւնների պետականացման մասին

17 դեկտեմբերի 1920թ.

N 3

Երեւան

1. Հ. Ս. Խ. Հ. Յեղկոմի 17-ին դեկտեմբերի հրատարակած դեկրետի համաձայն՝ Հանրապետութեան մէջ գտնուած հոգեւոր հաստատութիւններին պատկանող բոլոր կուլտուր-կրթական հիմնարկութիւնները և նրանց ամբողջ գոյքը ենթարկւում են պետականացման:

2. Առաջարկում եմ տեղերում կազմակերպւած Յեղկոմների լուսաւորութեան բաժանմունքներին անմիջապէս ստանալ հոգեւոր հաստատութիւններին պատկանող հիմնարկութիւնների գործերն ու գոյքը և գործադրել բանւորա-գիւղացիական մասսաների կրթական կարիքների համար:

Ծանօթութիւն. Էջմիածնի վանական ճեմարանը, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարանն ու տպարանը՝ որպէս ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող հիմնարկութիւններ, Հայաստանի աշխատաւոր ժողովուրդների սեփականութիւն դառնալով, ենթարկւում են անմիջապէս Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատին և վերակազմւում վերջինիս կողմից նշանակւելիք կոմիսարի ղեկավարութեամբ:

Լուսաւորութեան ժողովրդական կոմիսար՝ [Ա.] Յովհաննիսեան

ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 137, թ. 1: Վաւերացուած պատճէն: Մեքենագիր:

Հրապարակուած է՝ «Կոմունիստ» (Երեւան), 19 դեկտեմբերի 1920թ., N 12: «ՀՍԽՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու», պրակ 1 (1920թ. նոյեմբերի 29 – 1921թ. փետրւարի 18), Էջմիածին, 1921, էջ 16:

N 4

ՀՍԽՀ լուսժողկոմատի կողմից Լեւոն Լիսիցեանին տրուած մանդատը

20 դեկտեմբերի 1920թ.

N 105

Երեւան

Տրւում է ընկ. Լեւոն Լիսիցեանին առ այն, որ նա նշանակւած է Էջմիածնի նախկին վանական բոլոր կուլտուր-կրթական հիմնարկութիւնների կոմիսար:

Ընկ. Կոմիսարը լիազօրւած է ստանալ նախկին տէրերից այդ հիմնարկութիւններն ու նրանց պատկանող շարժական եւ անշարժ գոյքերը՝ համաձայն ՀՍԽՀ Յեղկոմի 17 դեկտ[եմբերի] 1920թ. դեկրետի և լուսժողկոմի նո. 1 եւ 3 հրամանների: Ընկ. Կոմիսարին վերապահւած է իրաւունք տեղական

Յեղկոմի միջոցով բռնագրաւել պետականացուող հիմնարկութիւնների համար մասնաւոր անձանց մօտ գտնուած այն բոլոր հնութիւններն ու գեղարուեստական գործերը, որոնք ունեն համապետական նշանակութիւն:

Ընկ. Կոմիսարին իրաւունք է տրւում կազմակերպել իր հսկողութեան տակ գտնուած հիմնարկութիւններում ընթացիկ աշխատանքները:

Խնդրում եմ բոլոր խորհրդային և կոմունիստական հիմնարկութիւններին և կազմակերպութիւններին լայն աջակցութիւն ցոյց տալ ընկ. Կոմիսարին նրա վրայ դրած պարտականութիւնները կատարելու ժամանակ:

Լուսաւորութեան ժողովրդական կոմիսար
Դիւանապետ

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 228, թ. 4 և շրջ.: Պատճէն: Մեքենագիր:

N 5

Էջմիածնի նախկին վանական կուլտուր-կրթական հիմնարկութիւնների կոմիսարի գրութիւնը Մայր Աթոռի վանական խորհրդին

21 դեկտեմբերի 1920թ.
N 1
Էջմիածին

Խնդրում եմ կարգադրէք անմիջապէս յանձնելու վանքի էլեքտրական կայարանի և նրան կից նիւթեղէնի պահեստի բանալիները վարպետ Ղևոնդ Ղարախանեանին:

[Կոմիսար՝ Լեւոն Լիսիցեան]

ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 137, թ. 3: Թողոն: Ձեռագիր:

N 6

Էջմիածնի նախկին վանական կուլտուր-կրթական հիմնարկութիւնների կոմիսարի գրութիւնը Մայր Աթոռի Սինոդին

23 դեկտեմբերի 1920թ.
N 2
Էջմիածին

Համաձայն Հ. Ս. Խ. Հ. Յեղկոմի 17 դեկտեմբերի 1920թ. դեկրետի և լու-

սաւորութեան ժողովրդական կոմիսարի N N 1 և 3 հրամանների՝ Էջմիածնի վանքի բոլոր կուլտուր-կրթական հիմնարկութիւնները և նրանց պատկանող շարժական ու անշարժ գոյքը ենթարկւում է պետականացման:

Խնդրում եմ կարգադրել, որ ամսիս 24-ին, ժ. 10-ից Ձեր դիւանը սկսի յանձնել ինձ վերոյիշեալ հիմնարկութիւններին վերաբերող բոլոր գործերն ու փաստաթղթերը:

[Կոմիսար՝ Լեւոն Լիսիցեան]

ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 137, թ. 4 և շրջ.: Թողոն: Ձեռագիր:

N 7

Էջմիածնի նախկին վանական կուլտուր-կրթական հիմնարկութիւնների կոմիսարի գրութիւնը Մայր Աթոռի Սինօդին

23 դեկտեմբերի 1920թ.

N 3

Էջմիածին

Մատենադարանի շէնքն ամբողջովին պիտի յատկացուի այդ հիմնարկութեան[5] պէտքերին:

Խնդրում եմ կարգադրել, որքան կարելի է կարճ ժամանակում մատենադարանի շէնքից տեղափոխւեն Սինօդի դիւանը և դրասենեակը:

Կոմիսար՝ Լեւոն Լիսիցեան

ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 137, թ. 5 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 8

Էջմիածնի նախկին վանական կուլտուր-կրթական հիմնարկութիւնների կոմիսարի գրութիւնը Մայր Աթոռի դիւանին[6]

23 դեկտեմբերի 1920թ.

N 4

Վաղարշապատ

5 Խօսքն իր ղեկավարած հաստատութեան մասին է:

6 Լ. Լիսիցեանը նոյն բովանդակութեամբ գրութիւններ է ուղարկել Մայր Աթոռի Սինօդին, վանական կառավարութեանը, շուրջ երկու տասնեակ միաբանների (տե՛ս ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 137, թ. 6-8, Մատենադարան, Լեւոն Լիսիցեանի ֆոնդ, թղթ. 261, վաւ. 3, 4):

Խնդրում եմ մինչև ամսիս 26-ը վերադարձնել այն բոլոր իրերը, որոնք պատկանում են պետականացրած հիմնարկութիւններին (նախկին ճեմարանին, մատենադարանին, թանգարանին, տպարանին կամ էլեքտրական կայարանին), եթէ այդպիսի իրեր կան Ձեզ մօտ:

Ծանօթ. տե՛ս այդ մասին հրատարակած հրամանը:

Կոմիսար՝ Լեւոն Լիսիցեան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1172, թ. 1: Բնագիր: Ձեռագիր:

N 9

Էջմիածնի նախկին վանական կուլտուր-կրթական հիմնարկութիւնների կոմիսարի զեկուցագիրը ՀԱԽՀ լուսժողկոմին

23 դեկտեմբերի 1920թ.

Էջմիածին

Դեկտեմբերի 21-ից ես սկսեցի Էջմիածնի վանական կուլտուր-կրթական հիմնարկութիւնների գրաւումը: Նախքան իմ գալս Վաղարշապատի յեղկոմն արդէն կնքել էր մատենադարանը, թանգարանը և Զուարթնոցը, որտեղից Խաչիկ վարդապետը[7] վաղուց ի վեր փոխադրած է եղել Վաղարշապատ իր առանձին ժողովածուն:

Մատենադարանի ու թանգարանի գրաւումը կարելի էր առաջ կատարել շնորհիւ ընկ. Սենեքերիմ Տ. Յակոբեանի[8], որին ես խնդրեցի ստանձնել յիշեալ երկու հիմնարկութիւնների վերահսկողութեան գործը մինչև վերջնական կարգադրութիւն: Թէ՛ մատենադարանի և թէ՛ թանգարանի հիմնական ստուգումն ու կարգաւորումը հետագայ ընթացիկ աշխատանքների և ժամանակի խնդիր է: Երկուսն էլ պահանջում են լրիւ վերստուգում և մշտական ու կարող աշխատակիցների կազմ:

Ճեմարանի ձուլումը գիմնազիայի հետ արդէն կատարուել է: Այդ մասին աւելի մանրամասն կզեկուցի Ձեզ ընկ. Յովհ. Յովհաննիսեանը[9]: Ճեմարանը, ինչպէս և ուրիշ վանական հիմնարկութիւնները (բացի, թերևս, մատենադարանից) անցնում են մեզ ամենաանխնամ ու լքուած վիճակի մէջ: Ցիր ու ցան եղած կահաւորութիւնն ու գոյքը գոնէ մասամբ վերականգնելու

7 Մայր Աթոռի միաբան: Հոգեւոր ծառայութեանը զուգահեռ զբաղուել է նաեւ հնագիտական պեղումներով եւ հին ձեռագրեր ու արժէքաւոր իրեր հաւաքելով:

8 Ցայտնի բանասէր, մանկավարժ: 1917-1921 թթ. Մայր Աթոռի թանգարանի վարիչի օգնականն էր, 1921-1937 թթ.՝ Էջմիածնի մատենադարանի տնօրէնը:

9 Անուանի բանասաղեղծ, մանկավարժ: Հայաստանի խորհրդայնացումից յետոյ հանդիսացել է Վաղարշապատի գաւառի լուսաւորութեան բաժնի վարիչը:

համար, նաև մատենադարանին ու մնացած պետականացուղ հիմնարկութիւններին պատկանող իրերը վերադարձնելու նպատակով այսօր տպագրութեան եմ յանձնել յատուկ հրաման, որը երեք օրւայ ընթացքում կարող է ցոյց տալ իր արդիւնքը: Նաև ուղղել եմ նմանօրինակ գրութիւններ բոլոր վանականներին:

Գիմնազիոնի գրադարանի ընտրութիւնը կատարւելու է հետզհետէ:

Տպարանի պահեստը ընդունւելու է վաղը 3 հոգուց բաղկացած մի յանձնախմբի միջոցով (մի փորձւած գրաշար, էլեքտրական կայարանի և տպարանի մեքենավար և մի ուսուցիչ): Հարկաւոր է հիմնովին մաքրել տպարանի շէնքը, տառերն ու մեքենաները, ստուգել տառերի քանակը և ձուլարանի դրութիւնը: Տպարանի մոտորը պակաս մասեր ունի: Տպարանը բանում էր էլեքտրական կայարանի ոյժով: Ցանկալի է [Ս.] Մահտեսի-Յակոբեանի ներկայութիւնը:

Էլեքտրական կայարանը և իր պահեստը կընդունեմ տպարանից յետոյ:

Ամենից շատ ժամանակ խլեց մեզանից Խաչիկ վարդապետը իր անվերջ գանգատներով ու օյինբազութիւններով, բայց, այնուամենայնիւ, բաւականաչափ կարևոր նիւթեր յանձնեց մեզ: Սենեքերիմ Տ. Յակոբեանը կը պատմի այդ մասին: Բոլոր կամովին տւածը ստանալուց յետոյ մտադիր եմ խուզարկութիւն անել տալ նրա մօտ. հիմք ունեմ կարծելու, որ դեռ շատ բան թագցրել է:

Զուարթնոցում առայժմ չեմ եղել: Այնտեղ երկու պահապան է թողել Խաչիկը: Թանգարանը, զանազան քարէ ու կաւէ ֆրագմենտներով, կնքւած է: Մնացած վանքերն առայժմ նոյնպէս չեմ այցելել:

Սինոդից վաղը սկսելու եմ ընդունել բոլոր պետականացւած հիմնարկութիւններին վերաբերող գործերն ու փաստաթղթերը: Առաջարկել եմ պարպել նրա դիւանից մատենադարանի շէնքը: Մեսրոպ եպիսկոպոսին[10] առայժմ թողել եմ վերևի յարկում երկու սենեակ. ինքս անցնում եմ այդտեղի մեծ սենեակը, ուր նա առաջ բնակւում էր: Իմ խնդիրքով նա ներկայացնելու է զեկուցում մատենադարանի և իր և Գալուստի[11] տպագրութեան պատրաստ մատենագրական աշխատանքների մասին:

Գտնում եմ յարմարագոյն ընկ. Սենեքերիմ Տ. Յակոբեանին յանձնել մատենադարանի և թանգարանի վարչութեան գործը՝ տալով նրան բաւականաչափ օգնականներ և ազատելով նրան դասերից:

Խնդրում եմ նաև Ձեր կարգադրութիւնը առաջարկելու ճարտարապետ Թ. Թորոմանեանին (այժմ Երևանումն է) անցնել Էջմիածին և ստանձնել

---

10 Հայագէտ, հասարակական գործիչ: Մայր Աթոռի մատենադարանապետն էր:

11 Հայագէտ, բնագրագէտ-աղբիւրագէտ Գալուստ Տէր-Մկրտչեանը Մայր Աթոռի միաբաններից էր:

այստեղի ու շրջանի ճարտարապետական յիշատակարանների վերահսկողութիւնը: Այդ նպատակայարմար է նաև այն պատճառով, որ նա զբաղւած է այժմ Զուարթնոցի մօնոգրաֆիկ ուսումնասիրութեամբ[12]:

Լաւ կլինէր նաև Հռիփսիմէի վանքը գրաւել եկեղեցուց՝ նրան պահպանելու և օգտագործելու համար իբրև ճարտարապետական մի մեծ երկ, ինչպես այդ մատնանշում է նաև ընկ. Սենեքերիմը:

Յոյս ունեմ մինչև ամսիս 29-ը աւարտել գրաւման գործը: Դրանից յետոյ հնարաւորութիւն կունենամ մանրամասն զեկուցելու Ձեզ ինձ վերաբերող հիմնարկութիւնների վիճակի և ընթացիկ աշխատանքները կազմակերպելու մասին:

Ընկերական ողջոյնով՝ Լեւոն Լիսիցեան

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 228, թ. 2-3: Բնագիր: Ինքնագիր:

N 10

Նախկին վանքապատկան տպարանն ընդունող
պետական յանձնաժողովի արձանագրութիւնը

24 դեկտեմբերի 1920թ.
Էջմիածին

1920թ. դեկտեմբերի 24-ին Էջմիածնի նախկին վանական կուլտուրկրթական հիմնարկութիւնների՝ ընկ. կոմիսարի կարգադրութեամբ կազմած յանձնաժողովը բաղկացած երեք անդամից՝ նախագահութեամբ ընկ. Արամ Մուշեղեանի և անդամներ ընկ. Ղևոնդ Ղարախանեանի և Բենեամին Տէր-Գրիգորեանի, ընդունելու վանական տպարանը նախկին կառաւարիչ Արսեն վարդապետից[13]: Յանձնաժողովը, մանրամասն ստուգելով տպարանի պարագաները, իրեղենները, գործիքները, կահկարասիքը և մեքենաները, եկաւ յետևեալ եզրակացութեան.

1.Տպարանը պահւած է շատ անխնամ ձևով, բազմաթիւ կարևոր և արժէքաւոր գործիքներ և պիտոյքներ փչացել և ոչնչացել են անփութութեան և խնամքի բացակայութեան շնորհիւ:

2.Բոլոր գործիքները, տառերը սրահները պատած են փոշիի և կեղտի հաստ շերտով:

3.Ի նկատի ունենալով, որ 1911 թւի ինվենտարի գրքում նշանակւած

12 Թ. Թորոմանեանի «Զուարթնոց» աշխատանքը լոյս է տեսել 1978 թ:

13 Մայր Աթոռի տպարանի վարիչ, Գէորգեան հոգեւոր ճեմարանի տեսուչ:

տպագրական տառերի չափը մինչև այժմ պիտի ենթարկւած լինի մեծ փոփոխութիւնների, իսկ 1919 թւին կազմւած ցուցակում այդ քանակը չէ նշանակւած, տառերի խոշոր մասը գտնւում է չը ցրած վիճակում, իսկ մնացածը կասսաների մէջ, յանձնաժողովը որոշեց այդ տառերն ընդունել առանց կշռելու:

4.Տպարանի դրամարկղը յանձնւեց առանց կանխիկ դրամի:

5.Յանձնաժողովը որոշեց ամենակարճ ժամանակամիջոցում տպարանի դրամական հաշիւների ստուգութիւնը կատարել, որից յետոյ այդ հաշիւների մասին կազմել առանձին արձանագրութիւն:

6.Սոյն արձանագրութեանը կցւում է տպարանի, կազմատան, ձուլարանի, պահեստի, նաև էլեքտրական կայարանի գոյքերի մանրամասն ցուցակը (ինվենտար):

Նախագահ՝ Արամ Մուշեղեան
Անդամներ՝ Ղևոնդ Ղարախանեան, Բենեամին Տէր-Գրիգորեան

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 228, թ. 16: Բնագիր: Ձեռագիր:
ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 139, թ. 4: Թողոն: Ձեռագիր:

N 11

Մայր Աթոռի դիւանի գրութիւնը Էջմիածնի նախկին վանական կուլտուր-կրթական հիմնարկութիւնների կոմիսարին

27 դեկտեմբերի 1920թ.
N 763
Էջմիածին

Ի պատասխան Ձեր ամսիս 23, N 4 գրութեան, Հայրապետական դիւանը սորանով յայտնում է, որ թէ՛ վեհարանում և թէ՛ հայրապետական դիւանում չեն գտնւում իրեր, որոնք պատկանէին ճեմարանին, մատենադարանին, թանգարանին, տպարանին և կամ էլեքտրական կայարանին:

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1172, թ. 2: Թողոն: Ձեռագիր:

N 12

ՀՍԽՀ լուսժողկոմատի գրութիւնը Էջմիածնի նախկին վանական կուլտուր-կրթական հաստատութիւնների կոմիսարին

28 դեկտեմբերի 1920թ.
N 198
Երեւան

Ընկ. ժողովրդական կոմիսարի յանձնարարութեամբ ընկ. Լեւոն Սարգսեանը[14] *գործուղւում է Էջմիածին՝ ծանօթանալու Էջմիածնի պետականացած կուլտուր-կրթական հաստատութիւնների աշխատանքներին:*

Կոմիսարիատի գործերի կառավարութիւնը յայտնելով Ձեզ այդ մասին՝ խնդրում է ցոյց տալ նրան ամեն տեսակ աջակցութիւն:

Գործերի կառավարիչ
Դիւանի վարիչ

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 228, թ. 5: Պատճէն: Մեքենագիր:

N 13

ՀՍԽՀ լուսժողկոմատի գրութիւնը Էջմիածնի նախկին վանական կուլտուր-կրթական հաստատութիւնների կոմիսարին

28 դեկտեմբերի 1920թ.
N 199
Երեւան

Ընկ. ժողովրդական կոմիսարի կարգադրութեամբ ընկ. Սիմէօն Մահտեսի-Յակոբեանը նշանակւում է Էջմիածնի պետական տպարանի կառավարիչ:

Այդ մասին կոմիսարիատիս գործերի կառավարութիւնը յայտում է Ձեզ ի գիտութիւն՝ խնդրելով ցոյց տալ նրան հնարաւոր աջակցութիւն:

Գործերի կառավարիչ (ստորագրութիւն)
Դիւանի վարիչ (ստորագրութիւն)

ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 139, թ. 5: Բնագիր: Մեքենագիր:
ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 228, թ. 6: Պատճէն: Մեքենագիր:

N 14

ՀՍԽՀ լուսժողկոմ Աշոտ Յովհաննիսեանի նամակը Լեւոն Լիսիցեանին՝ նրա յետագայ գործունեութեան մասին

28 դեկտեմբերի 1920թ.
Երեւան

Էջմիածին է մեկնում ընկ. Լ. Սարգսեանը՝ ծանօթանալու Ձեր հսկողու-

14 Մայր Աթոռի տպարանի վարիչ, Գեորգեան հոգեւոր ճեմարանի տեսուչ:

թեան տակ գտնուող հիմնարկութեան արդի վիճակի հետ: Ես նրան տուել եմ յատուկ մանդատ այդ մասին: Կամենում եմ նաև մասնաւոր կերպով բացատրել Ձեզ նրա առաքելութեան նպատակը: Ես ենթադրում եմ, որ Էջմիածնում Ձեր գործունէութիւնը ժամանակաւոր բնոյթ է կրելու: Տեւական աշխատաքի համար ես ի նկատի ունեմ Ձեր տեղ Լ. Սարգսեանի թեկնածութիւնը: Ձեր աշխատակցութիւնը կարեւոր եմ համարում ուրիշ ասպարէզներում՝ աւելի գիտական, մասնագիտական հարցերում: Դուք արդէն իսկ մտնում եք Երեւանի ժող[ովրդական] համալսարանի դասախօսների ցուցակի մէջ, այդտեղ դուք պիտի դասախօսէք սոցիալ-տնտեսական աշխարհագրութիւն և ուրիշ Ձեզ հետաքրքրող հարցերից: Ենթադրում եմ, որ Դուք պէտք է մտնեք նաև վերակազմելիք հնութ[իւնների] պահպանութեան կոմիտէի մէջ և այլն: Սիրում եմ հաւատալ, թէ իմ այդ ենթադրութիւնները համապատասխանում են Ձեր հակումներին, և Դուք չպիտի զլանաք պահանջուած վայրկեանին անմիջական աջակցութիւն ցոյց տալ ինձ ժողովրդական լուս[աւորութեան] գործերում:

Ընդունեէ եք ընկ. Սարգսեանին մատենադարանի յարկի տակ: Ձեզ մօտ եղած դրամներից կարող եք նրան ֆինանս[ական] աջակցութիւն ցոյց տալ աւանսի ձևով: Նոյնը նաև [Ս.] Մ[ահտեսի]-Յակոբեանի վերաբերմամբ:

Սպասում եմ Ձեր մանրամասն զեկուցման:

Ընդունեցէք ջերմ յարգանք[ներս]՝ Ա. Յովհաննիսեան

ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 138, թ. 3-4: Բնագիր: Ինքնագիր:

Հրապարակուած է՝ Վ. Էլոյեան, Փաստաթղթեր Լեւոն Լիսիցեանի մասին, «Բանբեր Հայաստանի արխիւների», 1973, N 1, էջ 191:

N 15

Լեւոն Սարգսեանի եւ Լեւոն Լիսիցեանի համատեղ զեկուցագիրը ՀՍԽՀ լուսժողկոմին՝

Էջմիածնի կրթամշակութային հաստատութիւնների ճակատագրի վերաբերեալ

1 յունուարի 1921թ.
Էջմիածին

I

Էջմիածնի նախկին հետևեալ կուլտուր-կրթական հաստատութիւնները պետականացել են կամ պիտի պետականացուեն.

1. Ճեմարան և իր յարակից բոլոր շինութիւնները. ննջարան, հիւանդանոց, սեղանատուն և խոհանոց, Քանանեանի շէնքը և այլն

2. «Օբսերվատորիա» (անաւարտ)

3. Տպարան

4. Էլեքտրական կայարան

5. Բաղնիս

6. Դեղատուն

7. Մատենադարան

8. Թանգարան

9. Նոր Վեհարան

10. Զուարթնոց իր շէնքերով ու այգով

11. Հռիփսիմէի վանքը իր շէնքերով ու այգով

12. Միաբանութեան նոր շէնքից առնւազն 6 բնակարան:

II

Յիշեալ բոլոր հաստատութիւններն ու շինութիւնները պիտի յատկացուեն զուտ կուլտուր-կրթական նպատակների համար և անձեռնմխելի ու ազատ պիտի ճանաչուեն կողմնակի (զինուորական, տնտեսական և այլ) պէտքերին ծառայելուց:

III

Յիշեալ բոլոր հաստատութիւնների ու շէնքերի ընդհանուր վարչութիւնը կենտրոնացուած պիտի լինի մի մնայուն մարմնի մէջ, որը կոլլեգիալ կազմ ունենայ և վարի այդ բոլոր հիմնարկութիւնների կազմակերպչական, տնտեսական ու վարչական մասերը յատուկ կոմիսարի նախագահութեամբ:

Ծանօթ. Գիմնազիան (նախկին ճեմարանի շէնքում) պիտի տարբի այս կոմիսարիատից անկախ:

IV

Մատենադարանը, մուզէն և Էջմիածնի ու շրջանի ճարտարապետական-հնագիտական յիշատակարանները պիտի լինեն գիտնական մասնագէտների ձեռքում:

Դրանց գոյութիւնը պահպանելու, լրացնելու և նոր նիւթեր ժողովելու համար պիտի հիմնւի առանձին ֆոնդ:

V

Էջմիածնի բոլոր վերոյիշեալ հաստատութիւններն ու գոյութիւն ունեցող գիտական նիւթերը հնարաւոր և անհրաժեշտ են դարձնում հիմնել այդտեղ հնագիտական-պատմական ինստիտուտ, որը, օգտագործելով եղած հարուստ նիւթերը, միաժամանակ նպաստէր նրանց կարգաւորմանն ու լրացմանը: Այդ տեսակ ինստիտուտի գոյութիւնը Էջմիածնում ընթացք

կը տայ գիտական մշակող ու ստեղծագործող աշխատանքներին՝ հնագիտական, պատմական, բանասիրական ու ազգագրական ճիւղերում և ընդունակ կարող է դառնալ ստեղծելու գիտական յարատև մի դպրոց:

Գիտական ուսումնասիրութիւնները պիտի հրատարակւեն պարբերական ժողովածուի կամ առանձին պրակների ձևով:

Ծանօթ. Իրերի բերմամբ Էջմիածնում կենտրոնանում են արդէն մի շարք անձինք, որոնք կարող են կազմել այդ ինստիտուտի կորիզը:

VI

Էջմիածինը, իր պետականացրած և դեռ պետականացւելիք հիմնարկութիւններով, շէնքերով, կալուածքներով և իր բնական դիրքով ու աշխարհագրական պայմաններով, հնարաւոր է դարձնում ստեղծել այդտեղ գիւղատնտեսական դպրոց՝ իր անհրաժեշտ բոլոր մասերով ու գործնական աշխատանքներով:

Լեւոն Սարգսեան
Լեւոն Լիսիցեան

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 228, թ. 9 և շրջ., 12: Բնագիր: Ձեռագիր:

ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 142, թ. 1-2: Սեւագիր օրինակ: Ձեռագիր:

Մատենադարան, Լեւոն Լիսիցեանի ֆոնդ, թղթ. 261, վաւ. 5: Փաստաթղթի ձեռագիր սեւագիր օրինակի պատճէնը:

N 16

ՀՍԽՀ լուսժողկոմի գրութիւնը Ալեքսանդրապոլի շրջանի ժողովրդական լուսաւորութեան կոմիսարին

4 յունուարի 1921թ.
N 324
Երևան

Խնդրում եմ ամեն աջակցութիւն ցոյց տալ Էջմիածնի պետական կուլտուր-պատմական ինստիտուտի վարիչ ընկ. Լեւոն Սարգսեանին՝ ձեռք բերելու եւ Էջմիածին փոխադրելու այն բոլոր իրերը եւ գոյքերը, որ անհրաժեշտ են հիմնարկութեան գիտական, լուսաւորական նպատակների համար:

Լուսաւորութեան ժողովրդական կոմիսար
Գործերի կառավարիչ

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 228, թ. 7: Պատճէն: Մեքենագիր:

N 17

Գէորգեան հոգեւոր ճեմարանի տեսչի գրութիւնը
Մայր Աթոռի վանական խորհրդին

5 յունուարի 1921թ.
Էջմիածին

Ս. Էջմիածնի ճեմարանը բռնագրաւել են 1920 թւի դեկտ[եմբերի] 19-ին՝ ուղղակի վերցնելով առանց հաշւի ամեն բան, ինձ էլ առաջարկել են բնակարանը դատարկել կարճ ժամանակամիջոցում, որն և արի: Աւելի մանրամասն զեկուցում անելու եմ Նորին Սրբութեանը՝ ճեմարանի դրամական հաշիւները փակելուց յետոյ:

Տեսուչ ճեմարանի՝ Արսէն ծ. վրդ.

ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 190, թ. 1: Բնագիր: Ինքնագիր:

N 18

Հայյեղկոմի կողմից լուսժողկոմ
Ա. Յովհաննիսեանին տրուած մանդատը

26 յունուարի 1921թ.
N 600
Երեւան

Տրւում է լուսաւորութեան ժողկոմ Աշոտ Յովհաննիսեանին, առ այն, որ Հայ յեղկոմի որոշմամբ յանձնարարուած է նրան Էջմիածնի գաւառ[ային] յեղկոմի միջոցով գրաւել, հաշւի առնել և Էջմիածնի պետ[ական] թանգարան փոխադրել Էջմիածնի վանքի և վանականների տրամադրութեան տակ եղած ժողովրդական սեփականութիւն կազմող այն թանկարժէք (ոսկեղէն, արծաթեղէն, քարեղէն, տնայնագործական, գիւղատնտեսական և այլն) իրեղենները, որ ներկայումս չեն գործադրում ծիսական նպատակներով:

Հայ յեղկոմի նախագահ՝ [Ս.] Կասեան
Գործերի կառավարիչ՝ [Յ.] Թումանեան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2252, թ. 1: Պատճէն: Ձեռագիր:

N 19

Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի կոմիսարի գրութիւնը ՀՍԽՀ լուսժողկոմատի գործերի կառավարչին

28 յունուարի 1921թ.

N 45

Երեւան

Էջմիածնի կուլտուր-պատմ[ական] ինստիտուտի կարիքների համար խնդրում եմ պահանջել Հայկօօպից կամ պար[ենաւորման] ժող[ովրդական] կոմ[իսարիատ]ից հետեւեալ նիւթերը.

1.Թել (շպագատ)՝ 100 կէս ֆունտանոց կծիկ

2.Կաշի բարակ (մեշին, ասֆեան կամ ուրիշ նման կազմերի համար)՝ 50 հատ

3.Մալիսկին կամ նման կտոր (կազմերի համար)՝ 1 թոփ (50-60 արշ[ին])

4.Զոր լազուր (կապոյտ ներկ)՝ 5 ֆունտ

5.Զոր շարլախ (լակ)՝ 2 ֆունտ

6.Գինու սպիրտ՝ 2 շիշ

*7.Սպիտակ ալիւր (*крупчатка*) կրախմալի փոխարէն՝ 1 փութ*

8.Ցինկի թիթեղ՝ 1 փութ:

Կոմիսար՝ Լ. Լիսիցեան

Մակագրութիւն. «Այս գրութեան համաձայն դիմւած է Հայկօօպի վարչութեան N 637 գրութեամբ 28/1/1921»:

ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 228, թ. 8: Բնագիր: Ինքնագիր:

N 20

ԶԵԿՈՒՑՈՒՄ

Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի կոլեգիային՝ նոյն ինստիտուտի (նախկին վանական կուլտուր-կրթական հիմնարկութիւնների) կոմիսար Լեւոն Լիսիցեանից՝ 1920թ. դեկտեմբերի 20-ից առ 1-ն փետրուարի 1921 թ-ի իր գործունէութեան մասին իր մանդատի սահմաններում՝ իր պաշտօնը ընկ. Լ. Սարգսեանին յանձնելու առիթով[15]

1 փետրուարի 1921թ.

Էջմիածին

1920 թ-ի դեկտեմբերի 20-ին ես, համաձայն լուսաւորութեան ժողովր-

15 Փաստաթղթի վերնագիրն է:

դական կոմիսարի N 105 մանդատի, ժամանեցի Էջմիածին՝ ստանալու եկեղեցական տերերից Էջմիածնի վանքի բոլոր կուլտուր-կրթական հիմնարկութիւնները (համաձայն ՀՍԽՀ Յեղկոմի 17 դեկտ[եմբերի] 1920թ. դեկրետի և լուս[աւորութեան] ժող[ովրդական] կոմ[իսարիատի] N N 1 և 3 հրամանների)՝ այդ հիմնարկութիւններին պատկանող շարժական և անշարժ գոյքերը և կազմակերպել յիշեալ հիմնարկութիւնների մէջ ընթացիկ աշխատանքներ: Ինձ իրաւունք էր վերապահուած նաև տեղական Յեղկոմի միջոցով բռնագրաւել պետականացուող հիմնարկութիւնների համար մասնաւոր անձանց մօտ գտնուած այն բոլոր հնութիւններն ու գեղարուեստական իրերը, որոնք ունեն համապետական նշանակութիւն:

Իմ իրաւասութեան վերաբերող հիմնարկութիւնները հետևեալն էին.

1. Մատենադարան
2. Թանգարան
3. Տպարան
4. Էլեքտրական կայարան
5. Ճեմարան՝ յարակից բոլոր շինութիւններով
6. «Օբսերվատորիա» կոչուած կիսաւարտ շէնքը
7. Զուարթնոցի աւերակները յարակից շինութիւններով

Այս հիմնարկութիւններից ճեմարանն արդէն փաստօրեն պետականացրած էր՝ ձուլուելով տեղական գիմնազիոնի հետ: Ճեմարանի ընդհանուր կացութեան մասին պետականացման վայրկեանին որոշ հասկացողութիւն է տալիս Վաղարշապատի գիմնազիոնի վերատեսուչ ընկ. Յ. Յովհաննիսեանի՝ իմ խնդրանքով կազմած նկարագրութիւնը, որ կցում եմ[16]:

Տպարանը և էլեքտրական կայարանը ընդունելու համար ես նշանակեցի մի յանձնախումբ բաղկացած երեք հոգուց՝ գիմնազիոնի ուսուցիչ Ա. Մուշեղեանից, էլեքտր[ական] կայարանի վարիչ Ղևոնդ Ղարախանեանից և գրաշար Բենիամին Տէր-Գրիգորեանից՝ ընկ. Ա. Մուշեղեանի նախագահութեամբ:

Ինչ կը վերաբերի մատենադարանին և թանգարանին, դրանց մանրամասն ստուգութիւնը առարկայ էր երկար ընթացիկ աշխատանքի, իսկ ինձ մնում էր սկզբում յայտարարել միայն դրանց պետականացման մասին, դատարկել այդ շինութիւնները օտար հիմնարկութիւններից և նշանակել այդ հիմնարկութիւնների համար նոր առժամանակ ընդհանուր վարիչ՝ կանգ առնելով (որ գտել էր լուսժողկոմի համաձայնութիւնը) ընկ. Սենեքերիմ Տեր-Յակոբեանի յարմարագոյն ընտրութեան վրայ:

Նախկին վանական կուլտուր-կրթական բոլոր այդ հիմնարկութիւն-

16 Նշեալ փաստաթուղթը տե՛ս ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 138, թ. 9:

ները պետականացման վայրկեանին ներկայացնում էին քայքայման ու անկենդանութեան ծայրահեղ պատկեր:

Ճեմարանը, որ երկար անգործունէութիւնից յետոյ վերսկսել էր իր պարապմունքները, մի հաւաքատեղի էր աղմկող, ծխող, ծուլ, հասակն առած, ատրճանակներով զինուած աշակերտների, իսկ վերևի յարկում ապրում էր իր հաւերի ու ոչխարների հետ միասին, դպրոցական ընթացքին անտարբեր անհոգութեամբ, ճեմարանի վերջին տեսուչը՝ Արսէն վարդապետ Ղըլտճեանը:

Տպարանում և էլեքտրական կայարանում փոշու ու ժանգի մէջ կորած կային մի քանի ծուլացած կիսաբանուոր-կիսաչարչի վաճառականներ և հողագործներ, երկու դրաշար, մի տպագրիչ, մի կազմարար, երեք աշակերտ և մի ծառայ տպարանում, և երկու մեքենավար էլեքտրական կայարանում: Էլեքտրական կայարանը վաղուց ի վեր չէր բանում մազութի բացակայութեան պատճառով, իսկ տպարանում վերջին մի տարուայ ընթացքում տպել էր միայն «Ծաղկաքաղը», [Կ.] Կոստանեանի եկեղեցական օրացոյցը և մէկերկու զինուորական կանոնագիրք՝ մի քանի մանր պատուէրները չը հաշուած: Գործ չը լինելու պատճառով բանուորները ցրուում էին, և վերջին շրջանում աշխատում էին կտորով:

Աւելի մխիթարական չէր մեր բարձրաստիճան կուլտուրական հիմնարկութիւնների՝ մատենադարանի և թանգարանի կացութիւնը: Երկուսն էլ դառել էին, փաստօրէն, «մեռած կուռքերի» անշունչ ժողովածու: Չկար դրանց մէջ աշխատողների թէկուզ նւազագոյն մի կազմ: Թանգարանում հազուագիւտ ազգագրական և գեղարուեստական այլ իրերն անխնայ փչանում էին ցեցից կամ խոնաւութիւնից, ինչպէս օրինակ՝ «Ազգագրական հանդէսներ»-ը և նկարները: Մատենադարանում գրքերը և ձեռագրերը խառն էին և երկշարք դարսած: Ո՛չ թանգարանը և ո՛չ մատենադարանն ունէին բաւարար ցուցակներ: Երկուսի մէջն էլ պահանջւում էր սկսել հիմնական ստուգման, կարգաւորման ու ցուցակագրութեան աշխատանք:

Զուարթնոցի աւերակներն այցելելով դեկտեմբերի 30-ին ընկ. Լ. Սարգսեանի հետ՝ մենք տեսանք, որ դրանք Զուարթնոցի թանգարանի, շինութիւնների և այգու հետ մէկտեղ թողնուած են իրենց բախտին, որովհետև մի սոված գաղթական, որ հազիւ էր կարողանում տաքացնել թոնրի մոտ իր ոտքերը, պահապան չէր կարող համարւել:

Հերթական խնդիրն էր ինձ համար՝ ծանօթանալ Խաչիկ վարդապետ Դաղեանի (որ բնակւում էր Վաղարշապատում) ժողովածուի հետ և ընդհանրութեան սեպհականութիւն դարձնել այն ամենը, որ մասնաւոր հաճոյքի կամ առևտուրի առարկայ չը պիտի լինէր այլևս: Այդ աշխատանքը

կատարել օգնեցին ինձ ընկ. Սեն. Տ. Յակոբեանը և մեր երիտասարդ ընկերներից մի քանիսը: Խաչիկ վարդապետից ստացած իրերի ցուցակը ներկայացնում եմ:

Դժբախտաբար երևան չեկան մի քանի կարևոր ձեռագրեր և վաւերաթղթեր, որ կային մի ժամանակ նրա մօտ (օր[ինակ]՝ ասորէրեն մագաղաթեայ աւետարանը, մելիքների հարկատուութեան թղթեր և կալուածագրեր, «Ալիի ֆերման» կոչուածը և այլն): Նաև ցուցակագրուած է Խաչիկ վարդապետի հին տպագրերի մի մասը, նրա դրամները:

Իմ կարգադրութեամբ ցուցակագրուած է նաև Մատթէոս եպիսկոպոսի գրադարանը, Տիրայր եպիսկոպոսի գրադարանը, որ առայժմ դեռ մնում է կնքւած 10 արկղերի մէջ մատենադարանում: Մատենադարանում դրուեցին երկաթէ վառարաններ (վանքից ու հոգևորականներից գրաւուած), որից յետոյ միայն հնարաւոր եղաւ սկսել այդտեղի աշխատանքը:

Միջին յարկի փոքր դահլիճում շինուեցին մեծ դարակներ (մամուլի բաժին):

Մատենադարանի արտաքնոցի համար փորուեցին նոր հորեր:

Փետրուարի 1-ին 1921թ. մատենադարանն ունի հինգ աշխատակից (մատենադարանապետի հետ միասին), մի ծառայող և պահապան, տպարանը՝ մի կառավարիչ, մի օգնական, մի հաշվապահ, հինգ գրաշար, երեք տպագրիչ, երկու կազմարար, մի ծալիչ, երեք մեքենա պտտեցնող, մի ծառայ և հինգ աշակերտ, էլեքտրական կայարանը՝ մի մեխանիկ-վարիչ և մի օգնական:

Մատենադարանում կատարւում է տպագրերի լրիւ ստուգութիւնը և ձեռագրերի նոր համարագրումը:

Տպարանում սկսել է շարւել Շապուհ Բագրատունին:

Թանգարանի աշխատանքները միառժամանակ հետաձգւել են՝ մասամբ աշխատակիցների բացակայութեան պատճառով, մասամբ էլ սպասելով, որ ազատւի գեղարուեստի բաժնի համար մատենադարանի մեծ դահլիճը:

Մատենադարանի շէնքը, որի միջին յարկի երկու սենեակները զբաղուած էին Սինօդի դիւանով, իսկ վերևի յարկում ապրում էր Մեսրոպ եպիսկոպոսը, պիտի այժմ ծառայէր մինակ իր բուն նպատակներին: Այդ պատճառով Սինօդին և Մեսրոպ եպիսկոպոսին առաջարկւեց տեղափոխւել յիշեալ շինութիւնից:

Գրաււել են վանքի գոյքից մատենադարանի համար.

1. Տիրայր եպիսկոպոսի գրքերի պահարանը

2. Սինօդի մեծ սեղանը

3. Սինօդի միջակ սեղանը

4. երեք թանաքամանի սարքեր Սինօդից և վանական դիւանից
5. մի կարկինի սարք Կորիւն եպիսկոպոսից
6. մի գրասեղան Գեւորգ եպիսկոպոսից
7. մի միջակ սեղան սև՝ դահլիճի
8. երկու մեծ գորգեր Յուսիկ եպիսկոպոսից
9. համրիչ մեծ
10. երեք երկաթէ վառարաններ
11. տախտակներ՝ Մատենադարանի մեծ դարակները շինելու
12. սանտիմետր՝ Մատթէոս եպիսկոպոսից
13. լուացարաններ, դոյլեր, ինքնաեռներ
14. լուսանկարչական ապարատ, ապակիներ և թուղթ:

Դեկտեմբերի 28-ին մի քանի օրով Էջմիածին եկաւ ընկ. Լ. Սարգսեանը՝ ծանօթանալու այդտեղի կուլտուր-կրթական հիմնարկութիւնների ընդհանուր դրութեան հետ, որպէսզի մի քանի ժամանակից յետոյ ընդունէ ինձանից այդ հիմնարկութիւններում տեղական գործ կազմակերպելու հոգսը:

Ընկ. Լ. Սարգսեանի, մինչ այդ ընկ. Սենեքերիմ Տէր-Յակոբեանի, ինչպես նաև Աշոտ Յովհաննիսեանի հետ յիշեալ հիմնարկութիւնների պետականացման և կարգաւորման, դրանց վերաբերող հրատապ խնդիրների մասին էինք մտածում մենք:

Ընկ. Լ. Սարգսեանի այն առաջարկը, որ Էջմիածնում գոյութիւն ունեցող, մատենադարանում և թանգարանում ամբարուած գիտական նիւթերը հնարաւոր և ցանկալի են դարձնում ստեղծել այդտեղ մի ինստիտուտ, որը ունենար պատմական-հնագիտական և բանասիրական ուսումնասիրական նպատակներ, գտաւ պատրաստի հող և անմիջական գործնականութիւն: Ընկ. Լ. Սարգսեանի, ընկ. Սենեքերիմ Տէր-Յակոբեանի և իմ այդ մի քանի օրերի ընթացքում իրար հետ ունեցած զրոյցների միջոցին Էջմիածնում այդպիսի մի ինստիտուտ ստեղծելու խնդիրը նորից և նորից արծարծուեց և նրա զանազան գործնական և էական կողմերը շեշտուեցին: Մատենադարանի ձեռագրական և արխիվային-պատմական նիւթերը չպիտի դառնային ամբարած ու պահուող միայն նիւթեր, այլ պիտի մշակուէին, ուսումնասիրուէին և հրատարակուէին: Պատմական-հնագիտական և բանասիրական ուսումնասիրութիւնների համար Էջմիածնի նիւթերը տալիս են անսպառ պաշար:

Եթէ այստեղ ստեղծուէր այդտեսակ մի գիտական ինստիտուտ, Էջմիածինը կունենար իր կուլտուրական վերածնութիւնը, կարող էր դառնալ գիտական որոշ մի կենտրոն և այդ, բացի նորանոր կուլտուրական արժէքներ ստեղծելուց, պիտի ունենար նաև պրոպագանդի և որոշ քաղաքական նշանակութիւն:

Էջմիածինն ունի արդէն իր առանձին և ուժեղ կուլտուրական աւանդութիւններն իբրև բազմադարեան կուլտուրական կենտրոն: Շնորհիւ իր աշխարհագրական դիրքի և արդէն գոյութիւն ունեցող յարմարութիւնների՝ նա կարող է հեշտացնել և դրդել գիտական աշխատանքներով զբաղւելու:

Տպարանը հնարաւոր է դարձնում գիտական ժողովածուների և այլ հրատարակութիւնների տպագրութիւնը:

Շեշտւեց նաև այն, որ իրերի բերմամբ Էջմիածնում են կենտրոնանում հետզհետէ որոշ քանակութեամբ մասնագէտներ, որոնք կարող են, թերևս, կազմելու ծրագրւած ինստիտուտի կորիզը:

Բացի պատմական-բանասիրական կազմակերպւած մի օրգան ստեղծելուց՝ արծարծւել էր և չափազանց ցանկալի և գրաւիչ էր թւում գիւղատնտեսական մի դպրոց հիմնելու միտքը, որը կապւած լինէր ինստիտուտի հետ ընդհանուր վարչական և տնտեսական կազմակերպութեամբ: Այդ տեսակ գիւղատնտեսական դպրոց ստեղծելու կարիքը և օգտաւէտութիւնը մեծ է, և դարձեալ Էջմիածինը և իր շրջանը՝ վանքապատկան ընդարձակ ագարակներով և կալւածներով և իր աշխարհագրական դիրքով, պէտք է նկատւէր յարմարագոյն վայրը գիւղատնտեսական դպրոց ստեղծելու համար:

Այս բոլոր առաջարկները ձևակերպւեցին և գործնական ուղղութիւն ստացան այն զեկուցում-ծրագրով, որը ներկայացւեց 1921թ. յուն[ւարի] 1-ին լուս[աւորութեան] ժող[ովրդական] կոմ[իսար] ընկ. Ա. Յովհաննիսեանին՝ ընկ. Լ. Սարգսեանի և իմ ստորագրութեամբ[17] (սևագիր պատճէնը կցում եմ):

Յիշեալ զեկուցագիրը գտաւ ընկ. Ա. Յովհաննիսեանի սկզբունքային հաւանութիւնը, և յուն[ւարի] 5-ին ես վերադարձայ Էջմիածին՝ սպասելով ընկ. Լ. Սարգսեանի վերադարձին Ալեքսանդրապոլից, որպեսզի վերջնական ձևակերպութիւն և կազմութիւն ստանայ ծրագրւած ինստիտուտը:

ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 142, թ. 3-4 շրջ., 6-7 շրջ.: Թողոն: Ձեռագիր:

Մասամբ հրապարակուած է՝ Վ. Էլոյեան, Փաստաթղթեր Լեւոն Լիսիցեանի մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, N 1, էջ 191-194:

N 21

Հայրապետական դիւանի գրութիւնը Մայր Տաճարի
լուսարարապետ Գէորգ եպիսկոպոս Զորէքչեանին

2 փետրուարի 1921թ.

N 20

Էջմիածին

Երէկ երեկոյ Հայրապետական դիւանի դիւանապետ Կորիւն եպիսկո-

17 Տե՛ս N 15 փաստաթուղթը:

պոսը զեկուցեց Նորին Ս. Օծութեան ազգիս Վեհափառ Հայրապետին, թէ Հայաստանի ժողովրդական լուսաւորութեան կոմիսար պ. Աշոտ Յովհաննիսեանը իրեն հրաւիրելով Մատենադարան, յանձնարարել է յայտնել Վեհափառ Հայրապետին, որ վաղը պէտք է յանձնուեն իրենց ցուցակագրելու Ս. Էջմիածնի պետ[ական] թանգարան փոխադրելու վանքի և վանականների տրամադրութեան տակ գտնուած ժողովրդական սեփականութիւն կազմող թանկարժէք (ոսկեղէն, արծաթեղէն, քարեղէն, տնայնագործական, գեղարուեստական և այլն) իրեղէնները՝ համաձայն 26 յունուարի ներկայ թուի N 600 մանդատի, որի պատճէնը տրուած էր Կորիւն եպիսկոպոսին Վեհափառ Հայրապետին ներկայացնելու:

Նորին Սրբութիւն առ այդ բարեհաճեց հրամայել դիւանիս գրել Ձեզ հետեւեալը: Նախ՝ յայտնել կոմիսար պ. Աշոտ Յովհաննիսեանին, որ Հայաստանի խորհրդային իշխանութիւնը շատ աւելի թանգարժէք իրեր պետականացրեց և գրաւեց Մայր Աթոռից՝ առանց Հայոց Հայրապետի գիտութեան և համաձայնութեան, որոնք պատկանում էին ընդհանուր հայ ազգին, և Նորին Վեհափառութիւնը միմիայն աւանդապահ էր ներկայանում և ոչ սեփականատէր: Երկրորդ՝ որպէսզի անախորժութիւնների տեղիք չը տրուի, Նորին Վեհափառութիւնն արտոնում է բաց անել Մայր Տաճարի դռները պ. կոմիսարի առջև՝ նայելու այնտեղ գտնուած իրեղէնները: Երրորդ՝ այս գործողութեան պէտք է ներկայ գտնուեն Մայր Աթոռի միաբաններից տ. տ. Անանիա, Յուսիկ արքեպիսկոպոսներ և Մեսրոպ և Մատթէոս եպիսկոպոսներ: Չորրորդ՝ ցուցակագրուած իրեղէնների ցուցակը պէտք է նախապէս ներկայացուեն Վեհ[ափառ] Հայրապետին և ապա թէ դուրս տարուեն Տաճարից: Եւ հինգերորդ՝ Տաճարում գտնուում են Տաճկահայաստանի քաղաքներից բերուած եկեղեցական իրեղէնները, որոնք աւանդ են, կնքուած են և պէտք է մնան անձեռնմխելի:

Սորա հետ տրուում է Ձեզ և մանդատի պատճէնը[18]:

Դիւանապետ՝ Կորիւն եպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2252, թ. 2 և շրջ.: Բնագիր: Ինքնագիր:

N 22

ԴԵԿՐԵՏ

Էջմիածնի գոյքերի մի մասը Լուսժողկոմ[ատ]ին յանձնելու մասին[19]

5 փետրուարի 1921թ.

Երեւան

1. Պետականացուում են և լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիա-

18 Տե՛ս N 18 փաստաթուղթը:

19 Նախկին հրապարակութեան վերնագիրն է:

տի անմիջական իրաւասութեան տակ դրւում Հռիփսիմէի վանքը, Զւարթնոց եկեղեցու աւերակները՝ յարակից շինութիւններով և գոյքերով, Էջմիածնի նոր Վեհարան կոչւած շինութիւնը, վանական հիւրանոցը և վանական նոր հանրակացարանը իր կահաւորութեամբ:

2. Ցանձնարարւում է սոցիալական ապահովութեան ժողովրդական կոմիսարիատին լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատի համաձայնութեամբ Էջմիածնում կենտրոնացնել հանրապետութեան որբանոցների մի մասը՝ յարմարացնելով և օգտագործելով նրանց կրթական-դաստիարակչական նպատակների համար պետականացրած զանազան հաստատութիւնների, շինութիւնների և գոյքերի մի մասը:

3. Ցանձնարարւում է լուս[աւորութեան] ժող[ովրդական] կոմիսարիատին վերակազմել Էջմիածնի կուլտուր-կրթական հաստատութիւնների պետականացրած ցանցը (մատենադարան, թանգարան, տպարան և այլն) և հիմնել Էջմիածնում կուլտուր-պատմական ինստիտուտ, որ նպատակ պիտի ունենայ գիտական հիմքերի վրա դնել Հայաստանի ժողովրդական կուլտուրաների ուսումնասիրութեան գործը և միաժամանակ մասսաների սեփականութիւն դարձնել հնութեանց այն բոլոր յիշատակարանները, որոնք գիտական ու գեղարւեստական նշանակութիւն ունեն և կարող են աղբիւր դառնալ կուլտուրական նոր արժէքների ստեղծագործութեան:

Նախհայյեղկոմի՝ Ա. Կասեան
Լուսժողկոմ՝ Ա. Յովհաննիսեան

«Կոմունիստ» (Երեւան), 8 փետրուարի 1921թ., N 50: «ՀՍԽՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու», պրակ 1 (1920թ. նոյեմբերի 29 – 1921թ. փետրուարի 18), Էջմիածին, 1921, էջ 108: